

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
ՇՈՒՄ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Արևմտահայերենի ուսուցումը կրթահամալիրում

Կատարող՝

Ռուզաննա Ասլանյան

Ուսումնական հաստատություն՝

Գյումրու Ակադեմիական վարժարան

Առարկա՝

Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Ղեկավար՝

Կարինե Ալեքսանյան

## Բովանդակություն

Ներածություն	-----	3
Գլուխ առաջին: Հետազոտական աշխատանքի խնդիրները:	-----	4
Գլուխ երկրորդ: Արևմտահայերենի ուսուցումը Վահե Հայկի «Կաթիլ փարան չմոռնաս, մամա՛» պատմվածքի օրինակով	-----	5-12
Գլուխ երրորդ :Կիրառվող մեթոդներ	-----	12-14
Եզրակացություն	-----	14-17
Օգտագործված գրականության ցանկ-	-----	18

## Ներածություն

Հայոց լեզվի և գրականության դասավանդումը հանրակրթական դպրոցում ունի ճանաչողական ու դաստիարակչական մեծ նշանակություն և կարևոր նախապայման է նոր սերնդի ձևավորման ու զարգացման գործում: Մերունդները կրթվում են նաև գրականությամբ: Գաղափարապես բարձր և գեղարվեստորեն հագեցած գրական ստեղծագործություններով հարուստ է դպրոցական ծրագիրը, որտեղ իր ուրույն տեղն ունի արևմտահայ գրականությունը:

Արևմտահայ գրողների ստեղծագործությունների ուսուցումը երբեմն անակնկալների առաջ է կանգնեցնում ուսուցչին, որովհետև բացակայում է ընկալումը, աշակերտները դժվարությամբ են ընթերցում տեքստերը, առավել դժվար են ընկալում բառերն ու քերականական երևույթները:

Սրանով էլ կարևորվում է արևմտահայերենի ուսուցումը:

Այս գործը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է, որ աշակերտները նախ պատկերացնեն աշխարհաբարի երկու տարբերակների առաջացումը, համեմատեն և ապա զգան արևմտահայերենի ուսուցման անհրաժեշտությունը: Այդ իսկ պատճառով պիտի գնահատեն ժամանակի աշխարհաքաղաքական իրավիճակը, կրթօջախների բացակայությունը, ապա մի քանի կրթօջախների բացումը արևելահայերի համար:

Արևմտահայերենի ուսուցումը կարևորվում է նաև նրանով, որ այն հաղորդակցության միջոց է այժմ միայն հեռավոր Մփյուռքում ապրող հայերի համար, որոնք էլ հաճախ, առնչվելով տարբեր լեզուների ու տարբեր քաղաքակրթությունների հետ, արդեն չեն օգտագործում հայերենը որպես հաղորդակցության միջոց, և հնարավոր է, որ եթե չձեռնարկվեն որոշակի միջոցներ, մոտ ապագայում արևմտահայերենը վերածվի մեռած լեզվի, իսկ մենք պատվախնդիր ենք, որ այդ տեղի չունենա:

Այս իսկ պատճառով յուրաքանչյուր ուսուցիչ պիտի նախանձախնդիր լինի, ջանադրաբար աշխատի, հաճախ խստորեն պահանջի աշակերտներից կարդալ արևմտահայ հեղինակների գործեր, չընկալելու դեպքում դիմի տարբեր միջոցների, որ լեզուն փոխանցվի հաջորդ սերունդներին: Իսկ այս խնդիրը լուծելու համար առաջնային պիտի դառնա արևմտահայերենի ուսուցումը: Այն հնարավորություն կտա աշակերտներին տեղեկություններ տալ արևմտահայերեն գրկան լեզվի կառուցվածքի և քերականական իրողությունների վերաբերյալ, որը հաղթահարելի է տարբեր մեթոդներով ու եղանակներով: Եթե արևմտահայ և արևելահայ լեզուների առաջացման հարցում մեզ օգնության են հասնում պատմության և հայոց լեզվի ու գրականության միջառարկայական կապերը, ապա հայերենի երկու ճյուղերի ուսուցման

հարցում ավելի նպատակահարմար է օգտագործել հայոց լեզվի և գրականության ներառարկայական կապեր:

Հայոց լեզու, հայ գրականություն առարկաների ներառարկայական կապը կնպաստի հետևյալ նպատակների իրականացմանը.

1. Հետաքրքրություն առաջացնել սովորողի մեջ՝ կարդալու արևմտահայ գրողների ստեղծագործությունները:
2. Խորացնել արևմտահայերեն բնագրեր կարդալու և հասկանալու հմտությունները:
3. Ձևավորել սովորողի աշխարհայացքը, բարձրացնել ընդհանուր կրթվածությունը:

## Գլուխ առաջին

### Հետազոտական աշխատանքի խնդիրները:

Արևմտահայ տեքստերի ընթերցումը սովորողներին կանգնեցնում է խնդիրների առաջ, և հաճախ նրանք դժկամորեն են ընդունում այդ տեքստերի ընթերցումը: Ուսուցիչը կանգնում է բարդ խնդրի առաջ. ինչպե՞ս հաղթահարել խնդիրը, ի՞նչ մոտեցումներ կիրառել:

Ներկայումս կրթական գործընթացում կարևորվում են ներառարկայական և միջառարկայական կապերը, որով կարելի է օգնել սովորողին կարդալ արևմտահայերեն բնագրեր, ընկալել գեղարվեստական պատկերների նրբերանգները, վերլուծել գեղարվեստական կերպարի բարոյահոգեբանական զարգացման դրոշապատճառները, հասկանալ քերականական տարբեր երևույթներ, համադրել արևելահայերենի հետ, ընկալելի դարձնել գրական երկի բովանդակությունը, հորոսների ապրումներն ու զգացումները՝ ամեննին չփորձելով արևմտահայերենից փոխադրել արևելահայերենի, այլ ընկալելով արևմտահայերենի առանձնահատկությունները:

Ակնկալվող արդյունքին հասնելու նպատակով ընտրվում է արևմտահայ գրող Վահե Հայկի «Կաթիղ փարան չմոռնաս, մամա՛» պատմվածքը:

## Գլուխ երկրորդ

### Արևմտահայերենի ուսուցումը Վահե Հայկի «Կաթիլ փարան չմոռնաս, մամա՛» պատմվածքի օրինակով

Դպրոցական առարկայական ծրագրով արևմտահայերենի ուսուցմանը հատկացված է հինգ դասաժամ, որը նախապես բաժանվել է հետևյալ կերպ.

	Թեմա	Նպատակը	Վերջնարդյունքներ	Ժամերի	Տնային հանձնարարություն
	Արևելահայերեն և արևմտահայերեն			<b>5</b>	
1.	1. Հայերենի երկու ճյուղերը՝ արևելահայերենն ու արևմտահայերենը:	<ul style="list-style-type: none"> <li>• խորացնել արևմտահայ բնագրերը կարդալու և հասկանալու հմտությունները</li> <li>• Նշել աշխարհաբարի ծագման ժամանակաշրջանը:</li> <li>• Հիշատակել աշխարհաբարի զարգացման գործում մեծ ավանդ ունեցած մեկ պարբերական և կրթօջախ:</li> </ul>	Ներկայացնել արևելահայերենի և արևմտահայերենի գործածության հատվածները:	1	Վարժ. 13 (էջ20):
2.	2. Արևմտահայերենի հնչյունական համակարգը:	-ամրապնդել արևմտահայերեն բնագրեր ընթերցելու կարողությունը	- ընթերցել և հասկանալ արևմտահայերեն բնագրեր ճիշտ արտասանությամբ	1	Վարժ. 15( էջ՝ 23):

3.	3. Արևմտահայերենի բառապաշարը:		-կարողանալ տեքստում նշել միայն արևմտահայերենին բնորոշ բառեր, արտահայտություններ	1	Գտնել տրված բառերի արևմտահայերեն համարժեքները:
4.	4. Արևմտահայերենի քերականական հիմնական տարբերությունները արևելահայերենից:		-կարողանալ տեքստում նշել միայն արևմտահայերենին բնորոշ քերականական ձևեր	1	Վարժ. 16, 17 (էջ՝25-26):
5.	5. Թեմատիկ հարցարանային աշխատանք:	Ստուգել և ամփոփել թեմայից ստացած գիտելիքները		1	

Առաջին դասաժամին նախ կրկնում ենք հայերենի զարգացման փուլերի մասին, առանձնացնում լեզվի զարգացման ընթացքը, առանձնացնում հին, միջին և նոր շրջանները, գնահատում այդ շրջանների լեզուները: Այնուհետև անդրադառնում ենք լեզվի գրային շրջանի նոր փուլին և նշում, որ այս շրջանի լեզուն աշխարհաբարն է, որը իբրև գրական լեզվի նոր որակ կազմավորվում և ձևավորվում է 16-17-րդ դարերից հետո, չնայած, ըստ որոշ ուսումնասիրողների, նրա լեզվական տարբերը հանդիպում են դեռևս 7-րդ դարում: Ըստ Հր. Աճառյանի աշխարհաբարի առաջին նմուշ է համարվում Բջնիի 1358թ. արձանագրությունը:<sup>1</sup>

Դեռևս միջնադարից սկսվում է հայերենի երկփեղկվածությունը, երբ ի հայտ են գալիս հնչյունական, բառիմաստային ու քերականական տարբերություններ: Դրանք կապվում են մեր լեզվի երկու պատմական փուլերին: Արևելահայերենը իր արմատներով գնում է դեպի գրաբարը,

<sup>1</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951, էջ 441:

իսկ արևմտահայերենը՝ դեպի միջին հայերենը: 15-16-րդ դարերից սկսած՝ այդ երկփեղկվածությունը դառնում է ավելի նկատելի, որն ի վերջո հանգեցնում է արդի հայերենի գրական երկու ճյուղերի ձևավորմանը: Աշխարհաբարի երկու ճյուղերի տրոհման մասին Յու. Ավետիսյանը գրում է.

«Աշխարհաբարի տրոհումը երկու ճյուղերի պայմանավորված էր արտալեզվական և լեզվական մի շարք գործոններով.

1. Հայաստանի պատմաաշխարհագրական տրոհումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև (387 թ.):
2. Դրանով պայմանավորված՝ գերիշխող լեզուների և որոշակիորեն տարբեր քաղաքակրթությունների ազդեցությունները. արևմտահայերենի վրա սկզբնապես մեծ եղավ թուրքերենի, իսկ ավելի ուշ՝ 19-րդ դարի կեսերից սկսած, ֆրանսերենի ազդեցությունը: Դա նկատվում է բառապաշարում, առանձին քերականական ձևերի կազմության մեջ: Արևելահայերենի վրա մեծ է եղել ռուսերենի ազդեցությունը: Դա նկատելի է բառապաշարի մեջ և շարահյուսական առանձին կառույցներում:
3. Տարբերակներից յուրաքանչյուրը յուրովի է կապվում մեր լեզվի զարգացման նախորդ փուլերին. արևմտահայերենը հնչյունական համակարգով, քերականական մի շարք հատկանիշներով սերտ առնչություններ ունի միջին հայերենի հետ, մինչդեռ արևելահայերենը նույն հատկանիշներով ավելի մոտ է գրաբարին:
4. Տարբեր են երկու գրականների բարբառային հիմքերը. արևելահայերենը հիմնվում է հայերենի ամենատարածված բարբառներից մեկի՝ Արարատյան (Երևանյան) (ուս ճյուղի), իսկ արևմտահայերենը՝ Պոլսի (կը ճյուղի) բարբառի վրա»:<sup>2</sup>

Այնուհետև նշվում է, որ արևմտահայերենով ստեղծվել է ճոխ գրական ժառանգություն, դրանով են ստեղծագործել մեր հանճարեղ հեղինակները: Այս լեզվով է գրված նաև Վահե Հայկի «Կաթիղ փարան չմոռնաս, մամա» պատմվածքը, որն անչափ հուզիչ մի պատմություն է նպարավաճառի, նրա մոր և հաճախորդի մասին:

Առաջին դասի ավարտին հանձնարարվում է տանը սովորել հայերենի երկու ճյուղերի՝ արևելահայերենի ու արևմտահայերենի մասին և ընթերցել Մ.Մեծարենցի «Վերադարձի երգ» բանաստեղծությունը:

Հաջորդ դասն սկսվում է արևմտահայերենի հնչյունական համակարգի ուսուցմամբ: Այդ նպատակով աշակերտներին բաժանվում է Վահե Հայկի «Կաթիղ փարան չմոռնաս, մամա՛»

<sup>2</sup> Յու. Ավետիսյան, Զայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Երևան, 2014, էջ 13-14:



պատմվածքի պատճենը: Որպեսզի աշակերտները ճիշտ ընկալեն արևմտահայերենի արտասանության առանձնահատկությունները, համացանցից միացնում եմ այս պատմվածքի ընթերցումը սփյուռքահայ Դավար Բեքերյանի<sup>3</sup> կողմից: Աշակերտները հետևում են ընթերցանությանը, միաժամանակ ծանոթանում պատմվածքի հուզիչ սյուժեին, ապրում հերոսուհու ցավը: Նման իրավիճակներ այսօր էլ կան, այսօր էլ են մարդիկ ուրանում իրենց ծնողներին: Բայց մայրն է այն միակը, որին պետք է բոլորից, անգամ սեփական ես-ից բարձր դասել: Ինչպես Շիրազն է ասում.

Աստվածուհու հետ չեմ փոխի  
Մորս մի մազն սպիտակած,  
Մուրք է մայրն էլ իմ ոստիսի,  
Երբ մայրը կա՝ էլ ի՞նչ աստված:

Գրական երկի բովանդակությունը վերլուծելուց հետո անցում է կատարվում լեզվական խնդիրների ուսումնասիրությանը:

Առաջինը աշակերտներն առանձնացնում են հնչյունների արտասանությունը (խուլերի գրանշանով արտասանվում է ձայնեղների շարքը, իսկ ձայնեղներով՝ շնչեղ խուլերի).

Աշակերտներն աշխատում են գույգերով, և յուրաքանչյուրը գտնում և ընդգծում է այն բառերը, որոնց մեջ կային գրության և արտասանության տարբերություններ: Աստիճանաբար նրանք հմտանում են արևմտահայերենի արտասանության օրենքներին, քանի որ յուրաքանչյուրը կարդում է մի պարբերություն, մյուսները հետևում և ուղղութեւք են կատարում: Աստիճանաբար սահուն է դառնում ընթերցանությունը: Աշակերտներից ոչ մեկը չի գնահատվում, բայց աստիճանաբար ձևավորվում է յուրաքանչյուրի գնահատականը:

Հաջորդ երկու դասաժամերին անդրադարձ է կատարվում արևմտահայերենի բառապաշարին և քերականական հիմնական տարբերություններին արևելահայերենից:

Տեքստից դուրս ենք գրում բառերը, որոնք անհասկանալի են աշակերտներին և բառարանի օգնությամբ ստանում դրանց բացատրությունը:


Ակնհայտ է դառնում, որ արևմտահայերենում և արևելահայերենում կան բառային տարբերություններ: Այնուհետև դասագրքի օգնությամբ առանձնացնում ենք հայերենի երկու շերտերի բառային հիմնական տարբերությունները:

Աշակերտները գրատախտակին ստեղծում են աղյուսակ, որում առանձնացնում են երեք այունակ՝

<sup>3</sup> <https://www.facebook.com/watch/?v=924869221311834>

1. բառեր, որ արևմտահայերենում և արևմտահայերենում ունեն նույն գրությունը, բայց տարբեր նշանակություն.
2. բառեր, որ ներկայացնում են հնչյունական -ուղղագրական տարբերակներ
3. բառեր, որ արևմտահայերենում հանդես են գալիս հայերեն համարժեքներով, իսկ արևելահայերենում օգտագործվում է փոխառյալ տարբերակը:

Արևմտահայերենի և արևելահայերենի բառային տարբերությունները



բառեր, որ արևմտահայերենում և արևելահայերենում ունեն նույն գրությունը, բայց տարբեր նշանակություն	բառեր, որ ներկայացնում են հնչյունական -ուղղագրական տարբերակներ	բառեր, որ արևմտահայերենում հանդես են գալիս հայերեն համարժեքներով, իսկ արևելահայերենում օգտագործվում է փոխառյալ տարբերակը:
Անուշ- քաղցր մուրաբա	Կենտրոն- կեդրոն	Բարկօղի- կոնյակ
Գրագետ- գրաճանաչ գրող	Կղզիգլխումբ- կղզեխումբ	Երգահան- կոմպոզիտոր
Հով- զով քամի	Ակացիա-աքասիա	Գետնախնձոր-կարտոֆիլ
Մականուն- ավել անուն ազգանուն	Մակուկավար- մակուկավար	Նվագավար-դիրիժոր
Պահարան- կահույքի տեսակ նամակածրար	Գցել- ձգել	Չայնասփյուռ- ռադիո
Երկվայրկյան- վայրկյան		Հասամայնավար-կոմունիստ
Գնացք- ընթացք		Վայրկյան-րուպե

Մրանից հետո անդրադառնում ենք արևելահայերենի և արևմտահայերենի քերականական հիմնական տարբերություններին:

Աշակերտները նախ նշում են, որ բնականաբար տարբեր կլինեն քերականական շատ հարցեր, քանի որ լեզուների բարբառային հիմքերը տարբեր են: Արևելահայերենը, ինչպես հայտնի է, առաջացել է հայերենի ում ճյուղի ամենահզոր և տարածված բարբառներից մեկի՝ Արարատյան բարբառի հետագա գրականացմամբ, իսկ արևմտահայերենը ստեղծվել է կը ճյուղի (Պոլսի և հարակից շրջանների բարբառներ) հիման վրա:

Այնուհետև սկսում ենք տեքստային աշխատանքը: Առանձնացնում ենք բոլոր քերականական տարբերությունները, խամբավորում և նշում քերականական տարբերությունը: Աշակերտները առանձնացնում են արևելահայերենից տարբեր քերականական երևույթները, նշում նրանց օրինաչափությունները:

1. Քերականական իրողություններից աշակերտները նշում են սահմանական ներկայի կազմությունը: Արևմտահայերենում այն կազմվում է **կը** կամ **կ'** մասնիկների միջոցով, որը արևմտահայերենին է անցել միջին հայերենից (ավելացնում է ուսուցիչը):
2. Քերականական տարբերություն է նկատվում նաև գայականի հոգնակիի կազմության ժամանակ, այնուհետև հոգնակիի սեռականի կազմության ժամանակ: Աշակերտները դուրս են գրում նման գոյականները: (Տե՛ս գծապատկեր 1,2):
3. Արևմտահայերենում անձնանիշ գոյականները հայցական հոլովում նման են ուղղականին, իսկ արևելահայերենում տրականաձև են:
4. Արևմտահայերենում ստացական հոգնակիները կազմվում է -նի մասնիկի և ստացական հոդի զուգորդմամբ: Աշակերտները գտան նման կազմության մեկ բառ՝ ծախքերնիս:
5. Աշակերտները գտան մի շարք կապակցություններ, որոնք կազմված են մը մասնիկով: Անհրաժեշտություն առաջացավ բացատրելու, որ մը-ն արևմտահայերենում հոդ է և գործածվում է աշխարհաբարյան մի դերանվան հնչյունափոխված տարբերակով: Եմ օժանդակ բայից և ալ շաղկապից առաջ բարեհնչության համար ստանում է ն մասնիկ՝ մըն:<sup>4</sup> Խմբերում առանձնացրին նման օրինակներ. հայ մըն է, բառով մը, կին մը, տեղ մը, շունչ մը կառնե, խուց մը, հաց մըն ալ կառնե, վայրկյան մը, տեսարան մըն է և այլն:
6. Աշակերտները նկատեցին նաև շեշտային տարբերություններ, երբ սփյուռքահայը որոշ բառեր շեշտեց ոչ վերջնավանկի շեշտադրմամբ: Օրինակ՝ ա՛նմիջապես, ա՛յո, կատարե՛լապես, ա՛նդիմադրելի, հե՛տո:

<sup>4</sup> Յու Ավետիսյան, Յայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Երևան, 2014, էջ 268:

## Գլուխ երրորդ

### Կիրառվող մեթոդներ

Դասերի ընթացքում կիրառվել են տարբեր մեթոդներ: Թեմայի սկզբում կիրառվել է դասախոսության մեթոդը, որտեղ ներկայացվել է արևմտահայ և արևելահայ գրական լեզուների երկփեղկումն ու զարգացումը: Արևելահայերենը Հայաստանի Հանրապետության պետական լեզուն է. արևելահայերեն է գրված ՀՀ Սահմանադրությունը, նրանով են արձակվում պետական հրամանագրերը, կազմվում պետաիրավական բոլոր փաստաթղթերը, իրականացվում է հանրակրթական և բարձրագույն ուսուցումը: Արևելահայերենը նաև Իրանի Իսլամական Հանրապետության հայության հաղորդակցման միջոցն է:

Արևմտահայերենով հաղորդակցվում է Սփյուռքի հայությունը: Աշխարհի բոլոր կողմերում ապաստանած հայերը խոսում, գրում և ստեղծագործում են հիմնականում արևմտահայերեն:

Հիմնական աշխատանքը կատարվել է զույգերով, բայց բառապաշարային և քերականական տարբերությունները քննարկելիս անցել ենք խմբային աշխատանքի: Օգտվել ենք նաև համակցված դասի սկզբունքներից: Կազմել ենք մի շարք աղյուսակներ, մտազրոհի օգնությամբ պարզաբանել ձևաբանական որոշ տարբերություններ, նշել բազմաթիվ նմանություններ:

Եթե առաջին դասաժամին աշակերտները դժվարանում էին ընթերցել տեքստը, ապա վերջին դասաժամին արդեն բոլորը ձգտում էին կարդալու: Դասերը նպաստեցին նաև գրականության թեմաների՝ Գրիգոր Զոհրապի նորավեպերի ընթերցմանն ու ընկալմանը: Աշակերտները բոլորն ընթերցել էին նորավեպերը, ակտիվ մասնակցեցին վերլուծությանը, ունեին սեփական կարծիքները, որոշ հատվածներ մեջբերում էին արևմտահայերենով:



Գծապատկեր 1



### Գծապատկեր 2

Միջառարկայական, ներառարկայական կապերը, խմբային աշխատանքը իրենց դերը խաղացին թեմայի ընկալման գործում:

Աշակերտներն սկսեցին կարդալ արևմտահայ տեքստը, չխուսափել դրանք ընթերցելուց, միմյանց բացատրել անհասկանալի բառերն ու արտահայտությունները, օգտվել արևմտահայերեն-արևելահայերեն բառարաններ:

Վերջին դասին կատարվեց նաև գնահատում: Խմբերի անդամները խմբի ներսում կատարեցին իրենց գնահատումը և արձանագրեցին, որ աշխատանքի սկզբում արևմտահայերեն չկարդացող կամ կարդալու մղվարացող աշակերտներն արդեն ձեռք են բերել որոշակի հմտություններ և կարդում են առանց դժվարանալու: Իսկ նրանք, ովքեր ունեին որոշակի հմտություններ, արդեն սահուն կարդում, նաև կարող են հաղորդակցվել արևմտահայերենով: Ստեղծված չորս խմբերում էլ կային առաջատար աշակերտներ: Իրենք այդ աշակերտներին գնահատեցին ինը միավոր, երկուական հոգի՝ ութ միավոր, մեկական հոգի՝ վեց միավոր:

Վերջին դասի թեմատիկ աշխատանքն էլ ապացուցեց, որ թեման յուրացվել է, և աշակերտները առաջադրված թեստային հարցերին տվել են բավարար պատասխաններ:

## Եզրակացություն

Արևմտահայ գրական լեզվի ուսուցումը ավագ դպրոցում խիստ անհրաժեշտ և արդիական է, քանի որ նահանջի եզրին կանգնած լեզուն պիտի լինի ուշադրության կենտրոնում: Թեման արդիական է նաև, քանի որ աշակերտների մեծ մասը դժվարանում է արևմտահայերենի հարցում, խուսափում արևմտահայ տեքստերից: Նման սկզբունքներով աշխատանքը տվեց զգալի արդյունք. ակտիվացրեց աշակերտներին, մղեց աշխատելու, հաղթահարելու որոշ դժվարություններ:

Դասերի ժամանակ կիրառվեցին առաջարկվող գործողություններ.

1. Տրված տեքստից *դուրս գրել* այն բառերը, որոնք կիրառվում են միայն արևմտահայերենում, դրանք *փոխարինել* արևելահայերեն համարժեքներով:
2. Ուսուցչի օգնությամբ *գրել* արևմտահայերեն նախադասությունների արևելահայերեն համարժեքները՝ ուշադրություն դարձնելով քերականական առանձնահատկություններին:
3. Առոգանությամբ *կարդալ* ուսուցչի կողմից ընտրված արևմտահայերեն տեքստը՝ պահպանելով արևմտահայերենի արտասանական կանոնները:
4. *Արտասանել* արևմտահայ բանաստեղծների ստեղծագործություններից որևէ հատված, փոխադրել արևելահայերեն:

Ստեղծվեցին միջառարկայական կապեր:

**Գրականություն:** Արևմտահայերենով շարադրված բնագրերի ուսումնասիրում, բառապաշարի և քերականական առանձնահատկությունների դուրսբերում:

**Պատմություն:** Աշխարհաբարի ձևավորման և զարգացման օբյեկտիվ պատճառների վերհանում: Աշխարհաբարի երկու գրական լեզուների առաջացման պատմաքաղաքական պայմաններ:

**Արվեստ:** Կինոյում և թատրոնում արևմտահայերենի գործածության ուսումնասիրում:

Ստեղծվեց կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ (Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ39, Մ40, Մ41).

1) գրական հայերենով ստեղծի տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք՝ օգտագործելով տարբեր արտահայտչամիջոցներ և համապատասխանեցնելով դրանք իրավիճակներին.

11) առաջադրի հետազոտական հարցադրումներ և վարկածներ, պլանավորի և իրականացնի հետազոտություններ՝ առաջարկելով համապատասխան մեթոդներ և բարելավման

եղանակներ: Վերլուծի ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում, կատարի վերացարկումներ և ընդհանրացումներ.

14) ճանաչի և պահպանի ակադեմիական ազնվություն տեղեկության աղբյուրներն օգտագործելիս.

15) ստեղծագործաբար և պատասխանատու կերպով կիրառի տեղեկատվական և թվային սարքերը որպես ժամանակակից աշխատանքային գործիք, իսկ համացանցը՝ որպես ուսումնական, համագործակցային և աշխատանքային հարթակ.

24) անկողմնակալ և առանց նախապաշարմունքների վերաբերվի ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին, վերլուծի հասանելի տեղեկույթը, ճանաչի, կառուցի և գնահատի փաստարկները.

25) ուսումնասիրի և ընդլայնի սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման վարքագիծ.

26) վերլուծի իր ուսումնառության գործընթացը, ընտրի ինքնակրթության մեթոդներ և գնահատի դրանց արդյունավետությունը.

28) ստեղծի մեղիա բովանդակություն և կարողանա տարածել իր ասելիքը մեղիայի տարբեր հարթակներում՝ գիտակցելով դրա հետևանքներն ու ազդեցությունը, պահպանելով էթիկան և համացանցից օգտվելու անվտանգության կանոնները.

33) կիրառի իր կրթական և աշխատանքային հնարավորությունները ինքնուրույն գործունեություն ծավալելու համար, ուսումնասիրի և գնահատի իր՝ տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտ գիտելիքներն ու կարողունակությունները, պատճառաբանված ընտրություն կատարի.

39) դրսևորի հարգալից և հոգատար վերաբերմունք ազգային և համաշխարհային արվեստի արժեքների նկատմամբ, ցուցաբերի մշակույթի իմացություն և դրա հետ հաղորդակցվելու ձգտում.

40) ներկայացնի հայ մշակույթի տեղն ու դերը համաշխարհային մշակույթում և համաշխարհային մշակույթի դերը համամարդկային արժեքների համատեքստում.

41) կարևորի իր՝ հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելը և ցուցաբերի պատասխանատու վերաբերմունք դրանց պահպանման գործում:

Դասաժամերին դրվեցին տարբեր խնդիրներ, ցուցաբերվեցին տարբեր մոտեցումներ, աշակերտները ստացան տարբեր տիպի առաջադրանքներ, արեցին տարբեր հարցադրումներ,

կարողացան կարդալ արևմտահայ տեքստեր, անել եզրակացություններ, կատարել գրական երկի գեղարվեստական վերլուծություն, ձեռք բերված փորձը կիրառել Գրիգոր Զոհրապի նորավեպերը ընթերցելիս: Անաչառ վերաբերմունք դրսևորեցին իրենց և ընկերները աշխատանքը գնահատելիս:

Համոզված եմ, որ սա նախադրյալ կդառնա այլ արևմտահայերեն տեքստերի ընթերցանության համար:

### **Գրականության ցանկ**

1. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951:
2. Յու Ավետիսյան, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Երևան, 2014:



3. Լ.Եզեկյան, Ա.Սարգսյան, Ռ. Սաքապետոյան, Լ.Հովսեփյան, Հայոց լեզու 11, ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի դասագիրք, Մանմար 2022 :
4. Ռուբեն Կարապետի Սաքապետոյան, Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Երևան, 2011:
5. Արտեմ Սարգսյան, *Արևմտահայերենի բառարան*, Արևիկ, Երևան, 1991:
6. Սուքիասյան Ա.Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004
7. <https://www.facebook.com/watch/?v=924869221311834>